



## ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆՅՈՒԹ

Գիտության ժամանակակից փվյալներով՝ քունը մարդկանց և կենդանիների համար գենետիկորեն կանխորոշված է: Մարդկանց տարբեր տարիքում քնի փոփոխությունը տարբեր է: Ավելի շատ քնում են փոքրերը և տարեցները: Դեռահասները և երեխաները օրական տաս ժամ քնի կարիք ունեն, միջին տարիքի մարդիկ՝ ութ, ծերերը՝ վեց:

Հայտնի է, որ տաղանդավոր և հանձարեղ մարդկանց մի մասը քիչ են քնել: Օրինակ՝ Նպոլեոն Բոնապարտը և փիլիսոփա, երաժիշտ և բժիշկ Ալբերտ Շվեյցերը օրվա ընթացքում քնել են չորս ժամ:

Մարդու արթուն մնալու ռեկորդը եղել է 18 օր, 21 ժամ և 40 րոպե, որից հետո այդ մարդու մոտ առաջացել է հալոցինացիա, փեսոդոսիան խանգարումներ, հիշողության կորուստ և այլն:



## ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆՅՈՒԹ

Մարդու արյունապարար անոթների ընդհանուր երկարությունը կազմում է մոտ 100 հազար կմ: Մարդը ողջ կյանքի ընթացքում նրա սիրտը բաբախում է մոտավորապես 3 միլիարդ 300 միլիոն անգամ: Մարդու սիրտը այնպիսի ճնշում է ստողծում, որը բավարար է արյունը 7-10 մետր հեռավորության վրա մղելու համար:

Մյուս կաթվածի հավանականությունը ամենաբարձրը երկուշաբթի օրն է:



## ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆՅՈՒԹ

Մթերաբլ փոխում է մարդու աղիներում ու սպամեքսում «բնակվող» բակտերիաների փայերը, տեսակներն ու քանակությունը, ինչի հետևանքով սթրեսային իրավիճակում վարակումներն ու սպամոքսի բորբոքումներն ավելի հաճախ է տեղի ունենում: Պատճառն այն է, որ այդ մանրէները կարգավորում են օրգանիզմի իմունային գործառույթները և ազդում ամբողջ օրգանիզմի վրա: